

«ՆԱԻՐԻԻ ԶՇՇ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

“НАИРИЙСКИЙ ДЭС”

ОТКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ

ОБЩЕСТВО



“NAIRI RMS”

OPEN JOINT STOCK

COMPANY

ԲԱ, Դ.Եղվարդ, Վլ. Շարենցա 60
Տել. (37424)23618

ՀՀ, ք.Եղվարդ, Չարենցի 60
Հեռ. (37424)23618

60 Charenc str., Yeghvard, RA
Tel. (37424)23618

Էլ. փոստ. nairides@bk.ru

23.05.2025թ

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
պարոն Հ. Սիմիդյանին

Հարգելի պարոն նախարար

Մեր ընկերությունը Կոտայքի մարզի Եղվարդի ռիոլիտադաջիտների հանքավայրի հարավ-արևելյան տեղամասի տարածքում իրականացնում է օգտակար հանածոյի արդյունահանում համաձայն 23.04.2014թ.-ի N29/201 ընդերքօգտագործման թույլտվության:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին համաձայն աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդում փոշու արտանետումների մշտադիտարկում,
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ,
3. արտադրական հրապարակի տարածքի հողերի քիմիական կազմ:

Ստորև ներկայացնում եմ 2024 թվականի ընթացքում Կոտայքի մարզի Եղվարդի ռիոլիտադաջիտների հանքավայրի հարավ-արևելյան «ՆԱԻՐԻԻ ԶՇՇ» ԲԲԸ հատկացված

«ՆԱԻՐԻԻ ԶՇՇ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՄԱՍՆԱՎՈՐԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔԱՐՏՈՒՆԳ ԱՐՈՒԹՅՈՒՆ
Զարգ. № 23-4414
23.05.2025թ.

տեղամասի տարածքում ընկերության կողմից իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

«ՆԱԻԲԻԻ ՃՇՇ» ԲԲԸ
տնօրեն՝



Ա.Հարությունյան

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԱՍՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը ¹
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Հանքավայրի տարածք	Անօրգանական փոշի (SiO ₂ 20- 70%)	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.01մգ/մ ³
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորգետնյա ջրեր	Նախատեսված չէ				
Հողային ծածկույթ	Արտադրական հրապարակի տարածք	Քիմիական կազմ	Տարածքի դիտարկում	2024 թվականի ընթացքում մեկ անգամ	Cr 32մգ/կգ, Mn 282մգ/կգ, Co <5մգ/կգ, Ni 51մգ/կգ, Cu 48մգ/կգ, Zn 43մգ/կգ:
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ	Նախատեսված չէ				
Աղմուկ և թրթռում	Նախատեսված չէ				
Ոչ վտանգավոր	Նախատեսված չէ				


¹Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՍԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները

Թափոններ	
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութի պահեստարաններ չկան
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապ- ված ենթակառուց- վածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում

Մշտադիտարկման կետերի տեղադիրքերը ներկայացված են նկար 1-ում

- Մթնոլորտային օդում աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումների կետ

- Արտադրական հրապարակի տարածքում հողերի մշտադիտարկման կետ



Նկար 1